ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/76

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ
Բողոք բերող՝ «Բարրի Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Իսրայելյանի, ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 09.09.2021թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պատվիրատուին՝

- արգելելու կատարել 24.08.2021թ.-ի թիվ 2 արձանագրությունից բխող գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված հետագա գործողությունները՝ այդ թվում այլ մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշում կայացնելը,

- ընդունել «Բարիի Թրեյդ» ՍՊԸ-ին որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում և «Բարիի Թրեյդ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքել, կամ

- պարտավորեցնել ընդունել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.09.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 08.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/14483-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 09.09.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

09.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/76 համարի ծածկագիրը:

22.09.2021թ.-ին, 01.10.2021թ.-ին, 06.10.2021թ.-ին, 08.10.2021թ.-ին և 11.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 08.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.10.2021թ.-ին:

2. <u>«Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ն 09.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը ներկայացնում եմ սույն բողոք «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ կարիքների համար ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման մասին 24/08/2021թ.-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու գործողության վերաբերյալ:

1.1. Սույն թվականի օգոստոսի 21-ին «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից) էլեկտրոնային գնումների www.armeps.am համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով մասնակցության հայտ (այսուհետ նաև՝ Հայտ) է ներկայացրել «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցմանը (այսուհետ նաև՝ Գնման ընթացակարգ)՝ դրան կցելով հրավերով պահանջված՝ հավելված 1-ը, 1.1-ը և 2-ը, միևնույն ժամանակ Համակարգում սահմանված կարգով լրացնելով անհրաժեշտ դաշտերը:

1.2.Հայտը ներկայացնելուց հետո Մասնակիցը ստացել է հաղորդագրություն այն մասին,որ Հայտը բարեհաջող բեռնվել է:

1.3. 24/08/2021թ.-ին հրապարակվել և էլեկտրոնային փոստի միջոցով Մասնակցին է ներկայացվել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի նույն օրվա թիվ 2 արձանագրությունը, որի 2-րդ կետում նշված է հետևյալը. «Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը, բացառությամբ «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի, որի ներկայացրած հայտում բացակայում է գնային առաջարկը և բոլոր հավելվածները, բացառությամբ հավելված 1.1-ի, հետևաբար հայտը ենթակա է մերժման:»:

Գտնում եմ, որ «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի Հայտը ներկայացվել է ՀՀ գնումների մասին օրենսդրությանը համապատասխան, ուստի այն ենթակա է գնահատման Պատվիրատուի կողմից կամ Գնման ընթացակարգը տեղի է ունեցել Համակարգում առկա տեխնիկական անսարքությունների պայմաններում, ուստի Պատվիրատուն պարտավոր է այն հայտարարել չկայացած, հետևյալ պատճառներով.

2.1.Ինչպես նշվեց վերոգրյալում, Մասնակիցը Հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է գնման ընթացակարգի հայտը դրան կցելով անհրաժեշտ հավելվածները, կատարելով հետևյալ հաջորդական գործողությունները.

- *Համակարգում «Բացել փաստաթուղթը» կոճակի միջոցով բեռնել է մրցույթի կառուցվածքը (xml ֆայլը):*
- *Ընտրել է անհրաժեշտ չափաբաժինները և սեղմել ենք «Վավերացում» կոճակը:*
- *Հայտը հաջողությամբ վավերացնելուց հետո «Պիտանելիության չափորոշիչ» դաշտում կցել է դիմում հայտարարությունը (հավելված 1) և ապրանքի ամբողջական նկարագիրը (հավելված 1.1), որը Համակարգի կողմից հաստատվել է հետևյալ նշանով ՝ «✓» կանաչ գույնի (Անցնել նշանը. Չափորոշիչն անցել է վավերացումը):*

- *Այնուհետև բացելով անհրաժեշտ չափաբաժիններում «ֆինանսական ծրար» դաշտերը կցել է գնային առաջարկները (հավելված 2) և համապատասխան դաշտերում լրացրել է գնային առաջարկները (առանց ԱԱՀ), որը կրկին Համակարգի կողմից հաստատվել է հետևյալ նշանով՝ «✓» կանաչ գույնի (Անցնել նշանը. Չափորոշիչն անցել է վավերացումը):*
- *Այս գործողությունները կատարելուց հետո սեղմել է «Պահպանել» կոճակը և ստացված xml ֆայլը պահպանել է իր համակարգչում:*
- *Այնուհետև սեղմել է «Վավերացում» կոճակը, ինչից հետո Համակարգից ստացել է հաղորդագրություն այն մասին, որ անհրաժեշտ է կցել հավելված 1.2-ը՝ հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և /կամ/ արտադրական ռեսուրսների օգտագործման մասին հայտարարությունը:*
- *Ելնելով այն հանգամաքներից, որ.*

- Մասնակցի կողմից ներկայացվող առաջարկը չի պարունակել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային կամ արտադրական ռեսուրսի օգտագործում,

- Հավելված 1.2 Հրավերով սահմանված ձևի է եղել և Հրավերով այն խմբագրելու՝ բովանդակությունը փոփոխելու վերաբերյալ դրույթ նախատեսված չի եղել,

- ՀՀ ֆինանսների նախարարի 17/05/2017թ.-ի 219-Ա հրամանի հավելվածով սահմանված ուղեցույցում այդ մասին որևէ դրույթ նախատեսված չի եղել,

- Առանց Հավելված 1.2-ը ներկայացնելու Համակարգը թույլ չի տվել աշխատանքը շարունակել,

Մասնակիցը, Հայտը ներկայացնելու խոչընդոտները հաղթահարելու հետ կապված պարզաբանում ստանալու նպատակով, զանգահարել է Պատվիրատուին: Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանել է, որ Համակարգում առկա են ծրագրային խնդիրներ, և դրանք հաղթահարելու նպատակով խորհուրդ է տվել Հայտի համապատասխան դաշտում՝ 1.2 հավելվածի փոխարեն կցել, որևէ այլ փաստաթուղթ:

- *Հայտը ներկայացնելը շարունակելու նպատակով և Պատվիրատուի խորհուրդը հաշվի առնելով՝ Մասնակիցը հավելված 1.2-ի կցելու փոխարեն համապատասխան դաշտում կցել հավելված 1.1-ը, որը ևս Համակարգի կողմից հաստատվել է հետևյալ նշանով ՝ «✓» կանաչ գույնի (Անցնել նշանը. Չափորոշիչն անցել է վավերացումը):*
- *1.2 հավելվածի կցագրման դաշտում կցելով 1.1 հավելվածը՝ Մասնակիցը Համակարգում սեղմել է «Պահպանել» կոճակը, այնուհետև «Վավերացում» կոճակը, որից*

հետո Համակարգից ստացել է հաղորդագրություն այն մասին, որ հայտը հաջողությամբ վավերացվեց:

- *Մասնակիցը Համակարգում սեղմել է «Փաթեթավորել» կոճակը, որից հետո Համակարգից ստացված փաստաթղթերը պահպանել է իր համակարգչում:*
- *Այնուհետև armeps Համակարգում բացված ՄՀ-ում բեռնել է Հայտի փաթեթը (zip ֆայլը), որից հետո Համակարգի կողմից ստացել է հաղորդագրություն այն մասին, որ Հայտի փաթեթը հաջողությամբ բեռնվել է:*

Մասնակցի վերը նշված գործողությունների վերլուծությունից հետևում է, որ.

ա) Մասնակցի կողմից իր Հայտը ներկայացնելու գործընթացում կատարել է հրավերով սահմանված պահանջները, ի թիվս այլոց՝ կցելով այդ Հրավերով սահմանված պարտադիր ներկայացման ենթակա բոլոր հավելվածները, որը հաստատվել է armeps Համակարգի կողմից «✓» կանաչ գույնի նշանով, որը նշանակում է «Անցնել. Չափորոշիչն անցել է վավերացումը»:

բ) Հայտը ներկայացնելու գործընթացում Համակարգում առկա է եղել սխալ (անսարքություն), որի արդյունքում խոչընդոտվել է Մասնակցի կողմից Հայտ ներկայացնելը, Մասնակցին չի թույլատրվել շարունակել իր Հայտը ներկայացնելու գործընթացը և պարտադրվել է ներկայացնելու իրեն չվերաբերող հանգամանքի մասին հայտարարություն՝ Հավելված 1.2-ը,

գ) նախորդ՝ «բ», կետում նշված սխալի հետևանքով Մասնակիցը՝ իրեն չվերաբերող 1.2 հավելվածը Հայտին կցելու փոխարեն, կրկին անգամ Հայտին է կցել 1.1 հավելվածը:

Վերը նշվածից բացի, Պատվիրատուի 24/08/2021թ. թիվ 2 արձանագրությունը ստանալուց հետո, Մասնակիցը իր edgar@barry.am էլեկտրոնային փոստի միջոցով 25/08/2021թ.-ին սույն բողոքում նկարագրված խնդիրների վերաբերյալ գրություն է ներկայացրել ՀՀ ֆինանսների փոխնախարար Ավագ Ավանեսյանի avag.avanesyan@minfin.am փոստային հասցեին, որին ի պատասխան Ա. Ավանեսյանից 27/08/2021թ.ին ստացել է բարձրացված խնդիրների ուսումնասիրության արդյունքների մասին տեղեկանք, որում նշված է հետևյալը. «Մասնավորապես մասնակիցը ըստ 2-րդ կետով ներկայացված գործողությունների իրականացրել է անհրաժեշտ չափաբաժինների ընտրություն (ուղեցույցի 9-րդ կետ), որից հետո չկատարելով ուղեցույցի 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված քայլերը՝ առանց նախատեսված դաշտերում անհրաժեշտ ֆայլերի կցագրման, իրականացրել է «Վավերացնել» գործառույթը (ուղեցույցի 13-րդ կետ), որից հետո, մասնակցի դիտարկմամբ հայտը հաջողությամբ վավերացվել է, մինչդեռ՝ ֆայլ

չպարունակող, դատարկ դաշտերով հայտը հնարավոր չէ հաջողությամբ վավերացնել հայտի պատրաստման գործիքի միջոցով՝ արդյունքում կարմիր գույնով կընդգծվեր հայտի կառուցվածքով նախատեսված պարտադիր կցագրման ենթակա դաշտերը՝ «Խնդրեմ մուտք անել որևէ արժեք» պահանջով:»

Այսպիսով ՀՀ ֆինանսների փոխնախարարը իր տեղեկանքում նախ դիրքորոշում է արտահայտել այն մասին թե Մասնակցի կողմից չեն կատարվել ուղեցույցի կետերը: Գտնում եմ դրանք անհիմն են և անորոշ, ուստի մինչև հստակ և հասկանալի հիմքեր չներկայացնելը չեն կարող դառնալ սույն գործով քննարկման առարկա: Միևնույն ժամանակ գտնում եմ, որ իր տեղեկանքում ՀՀ ֆինանսների փոխնախարարը սույն գործով էական և կարևոր նշանակություն ունեցող փաստ է հաստատել՝ այն, առանց «ֆայլերի կցագրման» (նկատի ունի՝ հավելվածների կցագրման), հնարավոր չէ իրականացնել «Վավերացնել» գործառույթը, հակառակ դեպքում կարմիր գույնով կընդգծվեր՝ «Խնդրեմ մուտք անել որևէ արժեք» պահանջը:

Սույն դեպքում Մասնակցի Հայտը Պատվիրատուի կողմից մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Հայտին հավելվածները կցված չեն եղել, սակայն բացի այն, որ այդ հավելվածները կցված են եղել Հայտին, միևնույն ժամանակ Համակարգը թույլ չի տալիս առանց հավելվածները կցելու ներկայացնել Հայտ, որի մասին է վկայում նաև ՀՀ ֆինանսների փոխնախարարն իր տեղեկանքում փաստելով, որ Մասնակիցն իր Հայտը չէր կարող ներկայացնել, եթե հավելվածները այդ հատին կցված չլինեին:

2015թ. հունիսի 5-ին Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Պետական գնումների մասին համաձայնագիր» միջազգային պայմանագրի /այսուհետ նաև Համաձայնագիր/ 4-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Նշված գնումներն էլեկտրոնային եղանակով իրականացնելիս, պատվիրատուն պետք է.

ա. ապահովի, որպեսզի գնումներն իրականացվեն՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝ տեղեկատվության նույնականացման և կոդավորման առումով, որոնք ընդհանուր առմամբ, հասանելի են և փոխգործակցող այլ ընդհանուր առմամբ հասանելի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի և ծրագրային ապահովման հետ, և

բ. պահպանի մեխանիզմներ, որոնք ապահովում են մասնակցության և մրցույթների հայտերի ամբողջականությունը, այդ թվում՝ ստացման ժամանակի հաստատումը և ոչ պատշաճ օգտագործման կանխարգելումը:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև Օրենք/ 2-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված է, որ «էլեկտրոնային միջոցներ՝ մալուխային, ռադիո, օպտիկական միջոցներով կամ էլեկտրամագնիսական այլ միջոցներով փոխանցված, տեղափոխված և ստացված տվյալների մշակման ու պահպանման, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգերի կազմակերպման համար անհրաժեշտ էլեկտրոնային, այդ թվում՝ ծրագրային և ապարատային միջոցներ».

Համաձայն Պատվիրատուի թիվ ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04 ծածկագրով «Գնանշման հարցման մասին» հայտարարության համաձայն՝ գնանշման հարցումը իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Վերը հիշատակված համալիր վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ գնանշման հարցման ձևով գնում կատարելը գնման էլեկտրոնային եղանակ է, որն իրականացնելիս Պատվիրատուն պետք է ապահովի, որպեսզի գնումներն իրականացվեն՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝ տեղեկատվության նույնականացման և կոդավորման առումով, որոնք ընդհանուր առմամբ, հասանելի են և փոխգործակցող այլ ընդհանուր առմամբ հասանելի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի և ծրագրային ապահովման հետ: Միևնույն ժամանակ Պատվիրատուն պետք է պահպանի մեխանիզմներ, որոնք ապահովում են մասնակցության և մրցույթների հայտերի ամբողջականությունը, այդ թվում՝ ստացման ժամանակի հաստատումը և ոչ պատշաճ օգտագործման կանխարգելումը:

Այսպիսով Պատվիրատուն, հանդիսանալով գնման էլեկտրոնային գործընթացի կազմակերպիչ, վերը նշված նորմերի համաձայն պարտականություն է կրում այդ գործընթացի պատշաճ կազմակերպման համար: Ինչպես նշվեց վերոգրյալում, այս դեպքում Համակարգում առկա է եղել սխալ՝ մասնավորապես Մասնակցից պահանջվել է ներկայացնելու հավելված 1.2-ը, որը վերջինիս վերաբերելի չի եղել, և դրա հետևանքով խոչընդոտվել է Մասնակցի կողմից իր Հայտի բնականոն կերպով ներկայացման ընթացքը, որը փաստում է Պատվիրատուի կողմից սույն գնման գործընթացը սխալ կազմակերպելու մասին:

Այսպիսով վերոգրյալից ելնելով գտնում եմ, որ խնդրո առարկա հավելվածները Մասնակցի կողմից ներկայացվել են պատշաճ կարգով, հրավերին համապատասխան, իսկ, եթե նույնիս պայմանականորեն ընդունենք, որ դրանք ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված չեն հասել Պատվիրատուին, ապա դա տեղի է ունեցել armeps

Համակարգում պահին առկա սխալների արդյունքում, որի պատասխանատու է հանդիսանում Պատվիրատուն՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված իր պարտականությունները չկատարելու այն է՝ չի ապահովել, որպեսզի գնումներն իրականացվեն՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝ տեղեկատվության նույնականացման և կոդավորման առումով, որոնք ընդհանուր առմամբ, հասանելի են և փոխգործակցող այլ ընդհանուր առմամբ հասանելի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի և ծրագրային ապահովման հետ, ինչպես նաև մասնակցության և մրցույթների հայտերի ամբողջականությունը, այդ թվում՝ ստացման ժամանակի հաստատումը և ոչ պատշաճ օգտագործման կանխարգելումը պահպանող մեխանիզմներ չապահովելը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:»:

Նշված նորմերի վերլուծությունից իր հերթի հանգում ենք նրան, որ գնման գործընթացի հիմնարար սկզբունքներն են գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսումը, գնման գործընթացին մասնակցող անձանց գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունը:

Այսպիսով գտնում եմ, որ սույն գնման գործընթացը կազմակերպված չի եղել կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով, մասնակիցների միջև մրցակցության խրախուսմամբ, քանի որ բացառապես Մասնակիցն է անկախ իր կամքից, գործողություններից միևնույն ժամանակ Պատվիրատուի գործողությունների և անգործության արդյունքում զրկվել պատշաճ կերպով իր հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատելու իրավունքից, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի գործողություններից մասնավորապես՝ Պատվիրատուն

էլեկտրոնային գնման ընթացակարգ կազմակերպելովի չի կատարել 2015թ. հունիսի 5-ին Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Պետական գնումների մասին համաձայնագիր» 4-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պարտականությունները, այն է էլեկտրոնային համակարգի անխափան աշխատանքի ապահովումը, իր հերթին հանձնաժողովը, քաջատեղյակ լինելով Մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացնելու պահին Համակարգում առկա անսարքություններ մասին, հաշվի չի առել, որ դրանով խոչընդոտվել է թե՛ Մասնակցի, և թե՛ իր՝ Հանձնաժողովի, համար հրավերով սահմանված կանոնների պատշաճ կատարումը:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից գտնում եմ, որ Հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումը չի բխում գնումների գործընթացի կազմակերպման հիմնարար սկզբունքներից, այդ որոշումը ընդունվել է անհամաչափ պայմանների կիրառմամբ, խտրական մոտեցում դրսևորելով և այլ խախտումներով:

3. Համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Համաձայն Սահմանադրության 59-րդ հոդվածի.

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Գտնում եմ, որ 24/08/2021թ. թիվ 2 արձանագրությամբ կայացրած Մասնակցի հայտը մերժելու որոշումն ընդունվել է ի թիվս վերը խախտումների, նաև պաշտոնատար անձանց իրավասությունների սահմանազանցման, ՀՀ տնտեսական կարգի, այդ թվում՝ գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության և ընդհանուր տնտեսական բարեկեցության, հակամրցակցային համաձայնությունների արգելքի սկզբունքների խախտմամբ:»:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պատվիրատուին՝

- արգելելու կատարել 24.08.2021թ.-ի թիվ 2 արձանագրությունից բխող գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված հետագա գործողությունները՝ այդ թվում այլ մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշում կայացնելը,

- ընդունել «Բարիի Թրեյդ» ՍՊԸ-ին որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում և «Բարիի Թրեյդ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքել, կամ

- պարտավորեցնել ընդունել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

3. <u>ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/14584-2021 գրությամբ դիմել է ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 09.09.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 13.09.2021թ.-ին թիվ 101 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

«Խնդրում եմ ընդունել ի գիտություն, որ «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի բացումը տեղի է ունեցել armeps էլեկտրոնային համակարգով

23.08.2021թ. ժամը 11:00-ին: Հայտեր բաժնից, երբ փորձել ենք բեռնել Բարրի Թրեյդ ՍՊԸ-ի հայտը, տեղի է ունեցել հետևյալը՝ ցուցադրված է, որ Բարրի Թրեյդ ՍՊԸ-ն կցել է հայտը, սակայն հայտի փաթեթը բռնելուց հետո միայն հավելված 1.1-ն է կցված եղել: Ըստ գնումների կազմակերպման կարգի 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա, հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաշարկը: Վերոգրյալով պայմանավորված Մարտունու Ծննդատունն ՊՓԲԸ-ն իրավունք չուներ ընդունելու հայտը քանի որ գնային առաջարկը բացակայում էր, դրա հետ մեկտեղ հասկանում ենք, որ հնարավոր է համակարգի խնդիր է տեղի ունեցել և ոչ մասնակցի մեղավորությամբ:

Ամփոփելով վերոգյալը կարծում եմ, որ հիմնվելով ՀՀ գնումների կազմակերպման 526-ն կարգին և ՀՀ գնումների մասին օրենքին, եթե հայտերից բացակայում է գնային առաջարկը ապա մասնակցի հայտը ենթակա է մերժման և Մասնակցի ներկայացրած պահանջները հիմնազուրկ են, նախատեսված չեն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, իսկ գնահատող հանձնաժողովը, մերժելով Բարրի Թրեյդ ՍՊԸ-ի հայտը, գործել է իրավաչափ՝ ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով 16.08.2021թ.-ին հայտարարվել է «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման նիստի օր է սահմանվել մինչև 23.08.2021թ.-ին ժամը 11:00-ն ներառյալ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 24.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում բացակայում է գնային առաջարկը և բոլոր հավելվածները՝ բացառությամբ հավելված 1.1-ից, ինչով պայմանավորված մասնակցի հայտը ենթակա է մերժման:

v. Բողոքներ քննող անձը 24.09.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/2/23673-2021 գրությամբ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է արդյո՞ք հնարավոր է Մասնակցի կողմից հայտի փաթեթով ներկայացված հավելված 1.1-ը համակարգում արտացոլվելու, իսկ հավելված 2-ը՝ գնային առաջարկը համակարգում չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

vi. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.09.2021թ.-ի թիվ Ն/26-1/23698-2021 գրությամբ հայտնել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի է armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Ինչ վերաբերում է համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնել են, որ վերոհիշյալ ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 16.08.2021թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 23.08.2021թ.-ը համակարգում խափանումներ չեն գրանցվել, որի միջոցով իրականացվել է թվով 531 հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 157 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 21.08.2021թ. իրականացվել է թվով 20 հայտի բեռնում, որոնցից գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 2 հայտ (ընդհանուր թվով՝ 9 հայտ), որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:

Միաժամանակ տեղեկացրել են նաև, որ հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում, բայց, քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ համակարգի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, այն ունի սահմանափակ հասանելիություն՝

վերջինիս ոչ պիտանի լինելը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում:

vii. https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթում առկա է միայն հավելված 1.1-ը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 09.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ … հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից հաստատած դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով 16.08.2021թ.-ին հայտարարված «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում բացակայում է գնային առաջարկը և բոլոր հավելվածները՝ բացառությամբ հավելված 1.1-ից, ինչով պայմանավորված մասնակցի հայտը ենթակա է մերժման:

Բողոքներ քննող անձը 24.09.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/2/23673-2021 գրությամբ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է արդյո՞ք հնարավոր է Մասնակցի կողմից հայտի փաթեթով ներկայացված հավելված 1.1-ը համակարգում արտացոլվելու, իսկ հավելված 2-ը՝ գնային առաջարկը համակարգում չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.09.2021թ.-ի թիվ Ն/26-1/23698-2021 գրությամբ հայտնել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի է armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Ինչ վերաբերում է համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնել են, որ վերոհիշյալ ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 16.08.2021թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 23.08.2021թ.-ը համակարգում խափանումներ չեն գրանցվել, որի միջոցով իրականացվել է թվով 531 հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 157 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 21.08.2021թ. իրականացվել է թվով 20 հայտի բեռնում, որոնցից գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 2 հայտ (ընդհանուր թվով՝ 9 հայտ), որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:

Միաժամանակ տեղեկացրել են նաև, որ հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում, բայց, քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ համակարգի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, այն ունի սահմանափակ հասանելիություն՝ վերջինիս ոչ պիտանի լինելը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում:

https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթում առկա է միայն հավելված 1.1-ը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ընթացակարգին «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ն ներբեռնել է թերի փաթեթ, որի արդյունքում հայտի փաթեթը հնարավոր չէ բեռնել, որպես հետևանք բացակայել են հրավերով պահանջվող փաստաթղթերը, այդ թվում՝ գնային առաջարկը, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 09.09.2021թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/76 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**